կիրն Արարատու, և շինեաց իւր տուն և բնակութիւն անդ։ Տեսեալ զայն Նեբրովթըն, կոչեաց զՀայկ 'ի Բաբիլոն, թէ՝ ե՛կ 'ի ներքոյ իշխանութեան իմոյ կացի՛ր։ Եւ իբրև ոչ հնազանդեցաւ Հայկն, Նեբրովթն առեալ զզօրսն իւր՝ եկն 'ի վերայ Հայկայ պատերազմաւ՝ 'ի սպանանել զնա։ Եւ Հայկն սակաւ զօրօքն ել ընդ դէմ Նեբրովթին և եհար նետիւ 'ի կուրծսըն Նեբրովթին, և սպան զնա, և դարձաւ 'ի տուն իւր։ Որոյ յանունն կոչեցաք մեք՝ ՀԱՅՔ, և երկիր մեր՝ ՀԱՅԱՍՏԱՆ։

Արմենակ՝ որդի Հայկայ՝ բնակեցաւ 'ի լեառնամէջ դաշտին, և կոչեաց զլեառն՝ Արագած։ Սա կեցեալ ամս յոլովս, ծնանի զԱրմայիս և զայլ բազումս՝ որ երկու եղբարք էին, Խոռ՝ յորմէ ազգն Խորխորունեան, և Մանաւազ՝ յորմէ ազգն Մանաւազեան։ Եւ ել որդին Մանաւազայ՝ Բաղ՝ 'ի ծովն Աղի, և բնակութիւնս շի-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան